

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ. ԱՇԽԱՐՀՀԼ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

ԱՐԾՐՈՒՆ ԱՒԱԳԵԱՆ

Հայ գրականութեան մեծերից մէկը՝ Կոստան Զարեանը (Կոստանդին Եղիազարեան, 1885-1969), թէեւ իր կեանքի մեծ մասը ապրեց հայրենիքից գուրու ու իր գրական մուտքը սկսեց օտար լեզուով (ռուսերէն, Փրանսերէն), սակայն շուտով վերադարձաւ իր մայր լեզուին եւ գրեց արեւելահայերէնով: Դա արդիւնք էր այն համոզման, որ հայրենի իրական հողն ու նրա վրայ ինքնուրոյն պետականութեան ստեղծման հետանկարները արեւելահայ լեզուին զարգացման աւելի մեծ հնարաւորութիւններ են տաիս: «Լեզուն, - զրել է Զարեանը, - բոյսի նման, ծաղկում եւ աճում է հայրենի հողի վրայ»¹: Երկարատեւ դեգերումներից յետոյ գրողն իր կեանքի վերջին տասնամեակն անցկացրեց հենց երազած այդ մայր հայրենիքում: Սակայն նրա կեանքը հանդարտ չանցաւ եւ ոչ մի տեղ:

Զարեանը գրել է գրական գրեթէ բոլոր սեռերով՝ բանաստեղծութիւն, ասք, պոէմ, թատերապոէմ, չսսէ, նոթեր, յուշագրութիւն, ուղեգրութիւն, պատկեր, պատմուածք, վէպ, օրագրութիւն, որոնց պէտք է աւելացնել նրա գրաքննադաստական, լեզուարանական, թատերագիտական, արուեստաբանական, խոհափիլսոփայական յօդուածները, նամակներն ու զանազան այլ գրութիւնները, որոնց մեծ մասի վերաբերեալ տասնամեակներ ու տասնամեակներ հայ գրականագիտութիւնը լոել է, իսկ նրա գրութիւնների մի ահագին մասն էլ ցայսօր մնում է անյատութեան մէջ կամ չի տպագրուել:

Հայ գրողների մէջ զժուար է նշել մի երկրորդ անձ, ինչպիսին Կոստան Զարեանն է, որն այնպիսի աստանդական կեանքով ապրած լինի եւ այնքան շատ լեզուներով (Փրանսերէն, ռուսերէն, խոալերէն, անգլերէն, խապաներէն) ստեղծագործած լինի, որ այնքան փոփոխական յարած լինի գրական այս կամ այն ուղղութեանը, այնքան իրարամերժ եղած լինի իր դաւանանքներում ու գաղափարներում: Իր բարդ բնաւորութեան, աշխարհաբազարացու իր կեցուածքի ու նաեւ մերժողական իր որոշ հայեացքների պատճառով Զարեանը եղաւ ու իր ողջ կեանքի ընթացքում մնաց քիչ ցանկալի մարդ թէ՝ իր հակառակորդների եւ թէ՝ իւրայինների համար: Այստեղից էլ այն ծայրայեղ գնահատումները, որոնք ցուցաբերուել են նրա նկատմամբ՝ մերժ նրան դասական գրող համարելով, մերթ՝ աւելորդ աղմուկ հանող, մերթ չունդալից ու մեծ, չողարձակ մտքերի հեղինակ, մերթ էլ մտքի պսակից հրաժարող ու հաւատափոխ:

Իր գրական ընդգրկումներով, շօշափած հարցադրումներով Կոստան Զարեանը նոյնքան արեւելահայ, որքան եւ սփիւռքահայ կեանքի պատկերուց եղաւ: Նրա գրականութիւնը մայր երկրի ու տարաշխարհի հայութեան ոգու բացայատման մի ամփոփ պատմութիւն է, հայ մարդու դարաւոր մտքերի ու ոգորումների դրսեւորում, առհասարակ «Բաղձալի Բացակայի»՝ Ազատ Հայաստանի որոնում:

Արեւմտահայ, մինչխորհրդապին ու խորհրդապին հայ կեանքի եւ սփիռ-քահայ իրականութեանը, հսպանիայի, Միացեալ Նահանգների, եւրոպական մի շարք երկրների բարքերին, քաղաքական կառոյցներին ու մշակութային արժէքներին վերաբերող զարեանական էջերը անփոխարինելի վաւերաթղթի արժէք ունեն և իրենց գեղարուեստական ու դասողական-վերլուծական ընդգրկումներով հայ գրականութեան լաւագոյն էջերից են:

Ազատապաշտական բաղմանքները Զարեանին հակել էին դէպի տարբեր գաղաքարախօսութիւններ ու դիրքորոշումներ՝ Բոլցեւիկեան թագու-գա՞ ամսաթերթում նրա տպագրած բանաստեղծութիւնները, յեղափոխա-կան նպատակների համար դրամների ու ուումբերի փոխադրումները ի վեր-ջոյ յանգեցրին ձերբակալութեան, ու մէկ տարուց աւելի Միւնիէնի բան-տում անցկացնելուց յատոյ Զարեանը վերջնականապէս համոզուց, որ կեանքը ի՞ ցաւերով, օրուայ հացը լեզի է, որ մարդիկ զրադրուած են միայն «զարեցրու եւ ծիռ միա» Հայթայթելով, իսկ յեղափոխականները օրերով վի-ճում են, քանի որ չգիտեն՝ ինչ անեն իրենց «անօրի ստամոքսները» լցնելու համար:

Զարեանի գրական բուն կեանքը սկսուել էր թերզիայում, որտեղ կեան-քը տառացիօրէն բուռն էր ու եռուն, յագեցած Ռուբենսի ու Չորդանսովի հրաշակերտ նկարներով, էմիլ Վերհարնի կենսունակ բանաստեղծութիւն-ներով։ Հենց վերջինիս հետ ունեցած մի զրոյցի ժամանակ էլ թերզիական բանաստեղծութեան «միակ կենդանի ձայնը» օտար լեզուով ստեղծագոր-ծող Զարեանին յորդորել է գրել մայրենի լեզուով՝ աղօթելու նման։ «...ի՞նչ է բանաստեղծութիւնը, եթ ոչ նշտապէս աղօրը»։ Եետագայում իր «Հառ-մէական Յուշտաթրծում Զարեանը կը գրի. «... օտար լեզուով զրելլ նշա-նակում է որիշների մտայնորեանը յարնարուել, հոգով եւ նորով ծունել ... նմանութիւն անել»³:

Զարեանի համար ի. դարի տասականները գործունէութեան բուռն տարիներ եղան. Պոլսի մամուլում նա տպագրում է մի շարք բանաստեղ-ծութիւններ, դասաւանդում զպրոցներում, հանդիպումներ ունենում ա-րեւմտահայ մտքի ու մշակոյթի մեծերի հետ, մասնակցում «Աստեղատուն» Միութեան աշխատանքներին, իր հիմնած Մեծեան⁵ հանդէսում հրատարա-կում նորարարական ու «մերժողական» յօդուածներ, աւելի ուշ՝ 1922ին, նա աշխոյժ մասնակցութիւն է ունենում Պոլսի «Հայարտուն»ի⁶ աշխա-տանքներին։ Ստեղծագործական ու ազգային գործունէութեան ծրագրերը շատ էին, սակայն սկսուած աշխարհամարտը եւ ազգային Մեծ Աղէտը ստի-պում են կիսաս թողնել ամէն ինչ. Զարեանը հրացովէ է կարողանում հե-ռանալ թուրքական սահմաններից՝ այս անդամ թափառելով երկրից երկիր, քաղաքից քաղաք, միշտ մնալով օտարական՝ օտարների մէջ։

Առհասարակ, Զարեանի կեանքին ընորոշ մնացին հակասական իրավի-ճակներն ու հակասական գաղափարադրոյթները, ազգային տիտուր կացու-թեան արդիւնք՝ ցաւի մորմոքներն ու ստեղծագործական անսանձ թորիչք-ները, մարդկային կեանքի միաժամանակեայ մերժումն ու պանծացումը Անկանգ որոնման տենչանքը Զարեանին տարել է ոչ միայն տեղից տեղ, այ-

լեւ մտքից միտք, գաղափարից գաղափար, ասելիքից ասելիք՝ միշտ ծարաւի հոգեկան երազուած սեղանին, միշտ երազուած կեանքը նախընտրելով իրական կեանքից: Սա հաւասարապէս վերաբերում է Զարեանի կեանքի նաւելու խորհրդային շրջաններին (1922-24 և 1961-1969) երբ սոցիալիստական «մեծ գաղափարները» իրականութեան դաժանութեան մէջ սկսել էին նեխել, երբ հարածուում էին ազգային գաղափարները. երբ գրականութեան թեմաները պարտադրում էին կուսակցական որոշումներով: Զարեանը իր խակ երկրում ապրում էր օտարի նման: Իր ապրած այդ օրերի համար նա զրել է. «Մայր իմ, եկել եմ: ... Եկայ աւելի որպ, բան երբեք: Ուրախ չէ աշխարհը: Գիտես, անցորդ տարազիր ամեն տեղ էլ դժբախտ է»:

Այդուհետ Հայաստանը Զարեանի համար երկար պիտի մնար հեռաւոր մի վայր, անորոշութիւններով լիցուն բարոյական մի անդունդ: Ուրիշ էր գրողի խառնուածքը, ուրիշ՝ իրականութեան պարտադրանքը, որը ողբերգութիւնների մի անլուծելի շղթայ էր պարզում նրա առջեւ: Նորից ու նորից նրա առջեւ ծառացել էր ամէն զնովի իր հոգեկան աշխարհն ու արուեստագէտի իր ազատութիւնը փրկելու հարցը: Հայաստանից հեռանալուց յետոյ Զարեանը երբեք երջանիկ չի զգացել իրեն (1950ականների վերջերին մի զրոյցի ժամանակ այդ մասին նա խոսապանել է Վիկտոր Համբարձումեսանին), բայց եւ երբեք իրեն երջանիկ չզգաց նաեւ Մայր Հայաստանում:

Այսպէս, իր ողջ կեանքի ընթացքում նրան մերժեցին ու քննադատեցին՝ «մեր» ու «ձեր» անուաններով, մերժեցին ու քննադատեցին արեւմտահայ շատ գրչակիցներ Մեծեանի հարատարակման համար, քանի որ ամսագիրը հոչակում էր մի հանգանակ, որը պիտի գրական յիշալընում առաջ բերեր՝ ժիանելով արեւմտահայ գրականութեան դասական ու ընթացիկ արժէքները: 1920ականների սկզբներին նրան մերժում էին բոլչեւիկեան իշխանութիւններն ու պրոլետ գրողները, համալսարանի կոմերիտ բջիջ աղջիկները՝ նրա գրականութիւնը համարելով բուրժուական ու ազգայնական, 30ականներին՝ «Փարիզի Մեծքականները» գրողին համարելով «յետնապահ» եւ թառաշնականները: Զարեանի գրականութեան մէջ «տեսներով» կոսմոպոլիտական մտածողութիւն եւ ազգային խնդիրների նկատմամբ անհոգութիւն: 40-50ականներին՝ սփիւրքահայ մամուլն ու ազգային կուսակցութիւնները կոչ էին անում չհաւատալ Զարեանի խօսքերին ու գործերին, 60ականներից մինչեւ իր մահը նրան անտեսում էին Հայաստանի Գրողների Միութեան շատ անդամներ՝ զրսեւողելով գրական նախանձ, կուսակցական շրջանակները՝ չտպագրելով նրա գրքերն ու հատորեակները՝ կոմունիստական գաղափարախօսութեանը չհամապատասխանելու պատճառարանութեամբ: Զարեանին, մանաւանդ, յաճախ են հանդիպել գրականութեան շուրջը պտտուող, այս կամ այն նեղպիկ փողոցներից գուրս պրծած «շիլ, կաղ, խորը գրականագետներ», որոնք թոյն են տարածել նրա շրջապատում: Գրողը յաճախ, իր առօրեայ կեանքում ստիպուած է եղել անգամ պատում: Գրողը յաճախ, իր առօրեայ կեանքում ստիպուած է եղել անգամ պատում: Գրողը յաճախ, իր յաջողութիւնների համար, պատճառարանի ու բացատրագրանալը իր յաջողութիւնների համար, պատճառարանի ու բացատրագրաներ տալ սրան ու նրան, թէ ինչու ինքը Եղեւնի զոհ չդարձաւ, ին-

չու խորհրդային կարգերի ժամանակ չձերբակալուեց, ինչու սփիւռքում չմահացաւ:

«Զսկրուած լինելու» իր այդ Հանգամանքի վերաբերեալ Զարեանը իր վաղ մանկութեանը, իրենց տանն ունեցած իր գերի մասին խօսելիս օգտագործում է «օկուոր» բառը: Դաուը ճակատագրի բերումով այդ բառը դարձաւ նրա ողջ կեանքի բնութագիրը: Ամէնուր եկուոր եղաւ նա՝ Եւրոպայում, Ամերիկայում, Մերձաւոր Արևելքի երկրներում, նոյնիսկ մայր երկրի ներսում: Այդպէս ապրեց մի ողջ կեանք՝ միշտ զգկից բաժանմանը: Հրաժեշտի խօսքին, մեկնող նաւերին ու ... աշխարհի փոթորկուն ծովերին, որ նշանակում էր տեւական եկուոր ու տեւական մեկնող: Անհանգիստ ծովը նրա անրաժան ընկերո պիտի դառնար, նրա անհանգիստ կեանքի խորհրդանիշը: «Նա փոռեց իմ մէջ, տարածեց մարմնիս ամէն մասում իր փորդիկները: Նա շտապեցրեց իմ աճման շրջանը և արազացրեց իմ անհատական այլափոխումը»¹¹: «Քամիի տակ այրող խարոյկի» պիտի նմանուէր Զարեանի կեանքը: Ինքը՝ Զարեանը, եւս Համակերպումների ու Հաշտութիւնների մարդը չեղաւ երբեք: Նրա մէջ ասես ապրել են մի քանի մարդ, որոնք զրսեւորել են ոչ միայն աարեքը մտածողութիւններ, այլեւ հակունեայ գաղափարներ ու գործունէութիւններ: Մտածումների ու գործունէութեան այդ սկզբունքը նա գրեթէ միշտ բիսեցրեց հերակլիստեան այն գաղափարադրոյթից, որ ամէն ինչի Հայրը պայքարոն է, պայքարը իւրայինների ու Հակառակորդների դէմ, պայքարը գրական ու մշակութային խոտանի դէմ, պայքարը սուտ ու սին գաղափարախօսութիւնների դէմ՝ միշտ մինչեւ վերջ, մինչեւ ինքնազուում: Իր այդ ընդգուուն կերտուածքը նկատի ունենալով էլ գրեց: «Եթէ ոչ ես, հապա որիշ ո՞վ», Եւ հեց այդ պատճառով չէ՞ր, որ նա աշխարհի եւ ոչ մի անկիւնում Հանգիստ չունեցող մարդը եղաւ:

Հայ իրականութեան մէջ քիչ մտաւորականների ու ազգային գործիչների կարելի է մատնանշել, որ ունեցած լինեն Զարեանի չափ մեծ աշխարհճանաչողութիւն ու իմացութիւններ, նրա չափ լաւատեղեակ՝ արուեստի բնագաւառների՝ թատրոնի, կինոյի, գրականութեան, երաժշտութեան, քանդակադրութեան, նկարչութեան և համաշխարհային մշակոյթի ամուլուսների արժէքներին, նուաճումներին ու զրսեւորումներին ու այդ ամէնի մասին գրած լինեն այնպիսի խորքով, ինչպիսին արել է Զարեանը:

Զարեանը դատողական արձակի մի նոր որակ ստեղծեց հայ իրականութեան մէջ, ազգային անցած ու անցնելիք ուղիները յայտնաբերելու մշտական միտուածութեամբ՝ քննադատութեան առնելով Հայ կեանքի թատերաբեմում հանդէս եկած թէ՛ Համակըրելի եւ թէ՛ Հակակըրելի տասնեակ ու տասնեակ անձանց, Հայ կեանքում ճակատագրական դեր խաղացած գործունէութիւններ ու երեւոյթներ: Ինչպէս ինքն է գրում, «մոմի դրորդ լոյսը ձնութին»՝ նա որոնել է Հայքինական չէնքն ու Հայ մարդուն: Զարեանը այն մտաւորականներից չէր, եւ առաւել եւս գրողներից, որոնք հաճոյանում են իրենց ընթերցողներին: «Առ, ընպիի բիւրենեայ այս զաւարի մէջ արշալոյսների շոշանդուն արեւը: Առ, կնք Շիրակի արգաւանդ դաշտի քաղց-

բահամ այս հացը»¹²: Այսպէս ասուել է ու գրուել յաճախ, քանի որ Շիրակը սովալլուկ մի դաշտ է եղել, իսկ գաւաթը՝ ճառագայթների գերեզման: Ազգային նուազուն սազի միալար այդ նուագները ծնել են «իանութիւնանների» ճաշակը բաւարարող գրականութիւն, ծառայողական գրականութիւն: Մինչդեռ Զարեանը հաշուի չի նստում ընթերցողների կարծիք հետ, ովքեր յաճախ լոկ որպէս ձեռնացուպեր են ծառայում գրողներին: Խևկական արուեստագէտը պէտք է իրականացնի իր եւը, ու անտեսի ամբոխի ճաշակը, որը միշտ էլ «վար է արուեստն»: Այս ելակէտով էլ Զարեանը գրել է իր գործերը, այս ելակէտից պախարակել հայ գրականութեան միջակ մշակներին, միւս կողմից՝ ամենախոր չերմութեամբ գնահատել արժանաւորներին: «Դուրեանը՝ ամրողովին հենք է, սարսուն մեղեղի, աստղի շորջը մելամահօրեն պտտուսող ողի: Նրա տրտմութիւնը բաղանքներով լեցուն է, նրա հեկեկանը թոշշը է և վշտու ցանկութիւն: ...Ե. Տեմիքիալաշեանը... հայ կեանքի ամենախորիրդասոր ողիներից մէկը: Չարեանը... զուսպ այդ մարդու մէջ հերոսական ի՞նչ ողի, ճարտիրոսացման ի՞նչ տեն»¹³: Իսկ ինչ ասեա, որ չարժեն Խաչատուր Արովեանին տրուած նրա բնութագրումները՝ «հայ գրականութեան մեծագոյն բանաստեղծ», «հայ ոզու դարպասը բացող», «մեր մեծագոյն դիցագներգակը», «հոգեպս օօրեղ» այն մարզը, որ մենակ պայքարում էր իր ժամանակի «առգւտ սարկաացներ»ի գէմ, «ինըն իսկ էպոսային հերոս, առասպեկ», «այն ... մեծութիւնը, որի առջեւ մարդ մնում է ապշած», «ապրել ուղղ ժողովրդի հսկայական կանչ»¹⁴ եւն., եւն.:

Զարեանը լաւ գիտէր, որ Հայաստան աշխարհը միշտ զո՞ւ է դարձել պատմական աննպաստ պայմաններին, իրենից դուրս զարգացած չարագուշակ դէպեքերի: Այդ պատճառով ժողովուրդը խեղճացել է, կորցրել իր ողին, իր ներքին ստեղծագործ ոյժը: Ու նա այն համոզումն ունէր, որ անհրաժեշտ է բացայատել ժողովրդի ներքին կորովի ակունքներն ու նրա մշակութային կոչումը, որը եւ կեանքի բարձրագոյն դրսեւորմանը պէտք է յանգեցնի: Ու քանի գեռ արդ չի արուած, հնարաւոր չէ հասկանալ հայի դարաւոր մարտիրոսութիւնը, «Արա բափած արինի համաշխարհային ինմաստը» (ընդգծումն իմն է - Ա.Ա.): Հայրենիքը, ըստ գրողի, աւելի կրօնական զգայնութիւնն պէտք է լինի ազգի համար, քան նիւթական կամ արդիւնաբերական: Զարեանը համոզուած էր, որ առանց հոգեկանի եւ ազգայինի ոչ մի կայրւն բան հնարաւոր չէ ստեղծել: Հայրենիքը ազնուացնող յատկանիւ ունի, եւ նա, ով լրում է իր երկիրը, կորցնում է իր հոգու բարձրութիւնը, գառնում է «վաճառական կամ միջակ մտաւորական», գաղարում է «ինըն իր նման նտածել» իսկ ով խօսում կամ գրում է օտար լեզուով «... որիշների մտայնութեանն է յարմարում, հոգով եւ մտրով ծուում»¹⁵: Հայի հոգեկան սնունդը զայս է Արարատից՝ տնտեսապէս անօգտակար այդ լեռից՝ քարէ այդ աստուածութիւնից՝ հայրենասիրութեան ու հայասիրութեան այդ յարատեւ հրաւէրից: Եւ երբ մէկը կորցնում է միւսին, հեռանում նրանից, փոքրանում է, զառնում որբ, նիւթական ու օտար հոսանք-

ների տակ կքւում, յայտնում երկու աշխարհների մէջ. «... - Երկո՞ւ - չո՞րս
աշխարհների մէջ - այսինքն՝ ոչ մի տեղ ...»:

Զարեանը նման եղաւ այն կոյրին, որը եկել էր լոյս որոնելու, ու այդ
լոյսը չկար, այն տառապեալին, որը երջանկութիւն էր վնասում, երբ
չուրջորդը վիշտ էր. Բայց եւ նա եղաւ այն մտաւորականը, որն իմաստ ու
բովանդակութիւն տուեց Հայ կեանքի բազում բարդ խնդիրների ու իր
գրականութեամբ ու գործունէութեամբ եղաւ տեսանող ու յայտնագոր-
ծող, իր գրականութեամբ պատկերեց ինչպէս միայնակ մարդու տառա-
պանքներն այս աշխարհում, այնպէս էլ մի ողջ սերնդի ողբերգութիւնը:

Այդ նա էր նաեւ, որ Հայ իրականութիւն բերեց Խ. դարի, եւ ոչ միայն Խ.
դարի, Համաշխարհային մեծութիւնների գործի ու վաստակի ուշագրաւ
արժենորումները, նրանց մասին գրեց Հարիւրաւոր Էջեր, բնութագրումներ
կատարեց, որոնք այսօր էլ մնում են անգերազանցելի: Շրջանառութեան
մէջ դրեց արուեստարանական ճանաչողական հարուստ նիւթ՝ Հայ մշակու-
թային միտքը բարձրացնելով աննախադէպ նոր մակարդակի: Թէ՛ որպէս
անձնական ճանաչման արդիւնք, թէ՛ որպէս գրականադէտ ու մտաւո-
րական՝ նրա գրական, մշակութային ու հասարակական գործունէութեան
շրջանակներից են Համաշխարհային այնպիսի մեծութիւնների անուններ,
ինչպիսիք են Պարլո Պիկասոն, Ռաբինոնաթ Թագորը, Թէոդոր Դրա-
գէրը, Կարսիա Լորկան, Ապոլլոնէլը, Շթեֆան Ցուայզը, Միգէլ Խը Ռւնա-
մունօն ու Էլի շատերը, որոնց հետ Զարեանը ունէր նամակագրութիւններ
եւ կամ անձնական ծանօթութիւններ: Կարելի է Հարցնել՝ կա՞յ մի ուրիշ Հայ
գրող, որի մասին չատ թէ քիչ ճանաչում ունեցող օտար մտաւորական եւ
գրող մի ամբողջ գեղարուեստական ու խոհական գիրք գրած լինի, ինչպէս,
օրինակ, Լորենս Դարէլի Զարեանապատում վերնագրով գիրքն է¹⁰: Եւ
մի՞թէ կարելի է թերագնահատել Զարեանի գործունէութիւնը Կ.Պոլոտի
Դանիէլ Վարուժանի, Ցականի, Գեղամ Բարսեղեանի, Արշամ Տա-
րեանի մասնակցութեամբ Մեհեած, իսկ քիչ անց՝ 1922ին, Բարձրագանք,
արտասահմանում 1925ին Փրանսերէն La Tour de Babel, 1948ին անգերէն Armenian Quarterly Հանդէսների ու ամսագրերի հրատարակման իրողու-
թիւնները:

Զարեանը նորարար էր թէ՛ արեւմտահայ, թէ՛ սփիւռքահայ եւ թէ՛ արե-
ւմահայ գրականութեան անդաստանում: Նրա գրականութիւնը լի է կեան-
քի ու աշխարհի, մարդու եւ երկրի նկատմամբ տածուած ինքնատիպ խոհե-
րով ու մտածումներով, ձևական եւ գաղափարական յայտնութիւններով
եւ այս ամէնը՝ դիտուած Հայ Մարդու ու Հայաստան աշխարհի տեսանկիւ-
նից: Զարեանը ողջ կեանքում այն տեսակէտին մնաց, որ եթէ այլ ժողո-
վուրդների համար գրականութիւնը գեղեցկութեան ու մտքի նուանման
ուրոյն միջոց է ու կոչուած է Հարստացներու արդէն բազում երեւոյթներով
պերճացած կեանքը եւ սնունդ է «քչերի եւ լնտրեալների, - ապա՝ հայի
համար նա անհրաժեշտ իոգեկան հաց է» (ընդգծումն իմն է - Ա.Ա.), եւ
Հայ գրողը չի կարող ստեղծագործել առանց այդ պարագան գիտակցերու:

Զարեանի գրականութեան առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ նրա գործերում ընդգծուած խնդիրներ են մնում ոչ միայն գրականութեան դերի ու կոչումի, այլև արուեստագէտի, ստեղծագործող անհատի ընդգրկումների ու դրանց գեղարուեստական դրսեւորումների վերաբերեալ գրողի նորովի հարցադրումներն ու դատողութիւնները. կարողանալ տեսնել էականը, տիպականը, երեւոյթների ու իրերի մակերեւութից անցնել խորք, որը «ուսկէ փեթակին նման հազարաւոր նոր իրականութիւններով է լցուն. Կարողանալ գեղակերտել ազգին յուզող երազը, յայտնաբերել հայ մարդու հոգեկան այն հարստութիւնները, որոնք դրսեւորուել են մեր փոթորկուն պատմութեան որքան եղերական, ոյնքան էլ դիմազնական երկարատեւ շղթայում, առաքելացնել ազգի մարտիրոսութիւնը, նրա գոյատեւման վճիռը բխեցնել նրա խակ կորուսաններից: Խնդիրներ, որոնք Զարեան գրողի առաջադրանքներն են մնում նրա գրեթէ բոլոր գործերում:

Ազգային նկարագրի զարեանական իդէալը յանգում է հոգեմարդուն, «այինքերա-անհատին», նրան՝ Արարատեան խակական հային՝ Արային: Այս առումով յատկապէս առանձնանում են գրողի՝ հայ առասպէլական ու բանահրաւական նիւթերի հիման վրայ ստեղծուած պոչմները¹⁷. Հային, Արայի, Վահագնի, Մշերի, Տիգրան Մեծի եւ այլոց դիմացազնական նկարագրերով ու հոգեկերտուածքներով:

Զարեանի գրեթէ բոլոր գործերում, տեսանելի, թէ անտեսանելի, ներկայ է իր անձը, որի խոհերի, մարումների ու դատողութիւնների բարդ ելեւչներում արտացոլում են աշխարհի ու մարդկանց անցեալ ու ներկայ իրողութիւններ, վեր են հանւում կեանքի ճշմարտութիւններ եւ դատողութիւններ են կատարում գալիք իրադարձութիւնների վերաբերեալ: Այս խօսքով՝ Զարեանի գրականութիւնը բնութագրում է իր խակ բառերով. «...որիշների մասին զբելիս, մենք խօսում ենք զիխաւորապէս մեր մասին»¹⁸:

Գրողը յաճախ է ընտրում փոխարերութիւնների ու խորհրդանիշների խրժին լեզուն: Գաղափար-պատկերներ. սա Զարեանի նախասիրած գրելանն է, որին գրեթէ միշտ գալիս է աւելանալու վերացարկուած դատողական խոհը, ինչը ընթերցողին մղում է նորովի մտածումների առ մարդն ու երեւոյթը, ստիպում իր հետ մտածել եւ «յայտնաբերման» հանոյքը վայելել: Ինչպէս իրաւացիորէն նշուել է (Աւետիս Աշարոնեան), Զարեանի գրականութիւնը չունէր իր նախորդները¹⁹: Այս նաեւ անհետեւորդ պիտի մնար: Ինքը՝ գրողը, եւս քիչ չփուեց ժամանակի գրական կեանքին: Նա միայնակ մարդն էր: Ինքն էր ու աշխարհը, ինքն էր ու Զայտաստան երկիրը:

Զարեանի կերտած հերոսներն էլ իրենց նկարագրով նման են իրեն՝ ընդգուն, բուռն, յաճախ անհաշտ եւ հակասական, բայց նաեւ երազապաշտ ու ազնուական: Այդ մասին գեռեւու 20ականներին թարմքավաճքում տպուած իր խօսքում վկայում էր Շահան Պէրսէրեանը, հաստատելով, որ «Քարլ ազդեցորիններ ու ծառումներ կը կազմեն Կոստան Զարեանի անձնականութիւնը ու կը բնորշեն անոր ներշնչան նկարագիրը»²⁰: Փիլսոփայ մանկավարժի դիտարկումը միանգամայն ճիշտ է մանաւանդ իր առաջին մասով: Զարեանի գրականութեան արժանիքներից եղան ու մնա-

յին այն նորարարական ձգտումները, որոնք նա հակադրում էր գրականութեան մէջ պարզ ընդօրինակումներին ու կրկնումներին Արտայարտման նորանոր ձեւերի եւ թարմ գաղափարների օգտագործումները օգնում են Զարեանին ստեղծելու պատկերուող զգայնութիւնների ու ապրումների, յոյզերի ու գործունէութեան անսովոր ու իրայատուկ կերպաւորումներ ու հերոսներ, որոնց իր խօսքերով ասած, միքելանջելոնների նման խօսում են սառոյցից, որ այրում է, ու կրակի մասին, որ սառոյց է: Մտածող ու ըմբոսա անձը ներկայ է Զարեանի կերտած բոլոր հերոսների մէջ: Խորհելու, գործելու, պաքարելու կեցուածքը կեանքի առաջադրած բարդ խնդիրների լուծման միջոց է նրանց բոլորի համար:

Ինքնարտայայտման այս եղանակը՝ իրերին ու դէպերին իր եսի պատկերը տալու գրողի միտումը, նրա գրականութեան պարտադիր տարր են դարձել փաստագրութիւնը, իրական իրականութիւնն ու անիրական իրականութիւնը, որոնք միշտ իրենց գրսեւորման բարձրագոյն գեղարուեստական մարմնաւորումներն են գտնում, դառնում խորքային ու ընդհանրացնող խօսք: Ասել է թէ գրողը, պատկերելով այն, ինչ որ կայ, աւելի միտուած է վերակերտելու այն, ինչ չկայ, եւ ինչը պիտի լինի «Աշխարհի միակերպութեան» բողէքեան բնութեագիրը շատ յարմար է գալիս Զարեանի գրականութեանը: «Անտեսանելի»ի եւ «անիմանալի»ի յայտնարերումը ասես դառնում է գրողի ստեղծագործական ճանապարհի ուղեկիցը, նրան մղում մինելու միեւնոյն ժամանակ թէ՛ թանձր իրապաշտ եւ թէ՛ ընդգծուած խորհրդապաշտ: Արուեստի մէջ Զարեանը, յանուն երևոյթների եւ իրերի խորքային արդ յայտնատեսութեան, մերժում էր արտաքին իմացականութիւնը, ուոմանտիզմի չպատճառարանուած յուղականութիւնը, այսպէս ասած՝ «արինալից երեսակայտքեան հեղեղները [դասականութեան]» յոգնած սպիրականութիւնները, [իրապաշտութեան] պարզը եւ տրամարանականը»:

Զարեանի գրականութիւնը գնահատելիս միշտ չէ, որ պէտք է չափման միաւոր ընդունել ազգային խնդիրների ընդգրկումները: Նրա գործերը երբեմն մտաւորական ու խորհող անհատի զգայնութիւնների ու դատումների արտայայտութիւններ են, որոնք պակաս կարեւոր չեն Զարեանին ճանաչելու համար: Նրանք նաև միջոց են ժամանացելու համար հայ ու համաշխարհին կեանքի բարդ երեւոյթների մէջ, հասկանալու ազգերի ու մարդկանց կեանքի ընթացքի էռութիւնը, խորանալու երեւոյթների իմաստի մէջ:

Այսուհաններձ, չի կարենի չնկատել, որ Զարեան գրողի ու մտածողի համար կարեւորագոյն խնդիրը եղաւ ու մնաց իր ժողովրդի ու երկրի ճակատագիրը այս փոքրիկ հողագնդի վրայ: Այս առումով Զարեանի գրականութեան ընդգրկումները շատ են մօտ Զարենցեան անդրադարձներին: գտնել իսկական Հայաստան երկիրը, «փօսել նրա հետ, սրտով սիրել նրան», յանուն որոնց անմնացորդ նուիրում եւ անդուլ գործունէութիւն էին դրանուրում երկու գրողներն էլ: Յիշենք թէկուզ այն երկակի վերաբերմունքը, որ ունէին Զարեանց ու Զարեանը Հայաստանում ստեղծուած նոր կարգերի վերաբերեալ ինչպէս Զարեանցը, այնպէս էլ աշխարհի բազում ճամփաներով անցած Զարեանը տեսնում էին, որ նուածումներին զուգըն-

թաց ծաւալըում են կաշկանդումներ ու արգելումներ, անհատի ազատութիւնների սահմանափակումներ։ Ուրեմն չկար ու չէր կարող լինել խականակութիւն առանց հայրենիքի, և չկար ու չէր կարող լինել ցանկալի հայրենիք, եթէ այն ազատ չէր։

Զարեանը իր կեանքի բերումով նաեւ ականատեսը եղաւ հայ մարդու ապրած ճակատազրական մի չարք գէպքերի՝ բռնութիւններ, աքսորներ, յեղափոխութիւններ, կոտորածներ, գաղթ եւն։ Հենց իր՝ Զարեանի ապրած կեանքը տարապիր հայ մարդու ապրած երկարաձիգ մի ուղի է եղել, որ ուղղակի կամ անուղղակի արդիւնք ու հետեւանք էր Եղեռնի «զարնող զուլմի» արձագանգ։

Գրուել ու ասուել է, թէ Զարեանը չի պատկերել եւ կամ չի անդրադարձել ազգային այդ մեծ արհաւիրքին։ Միանդամայն սխալ տեսակէտ ու կարծիք, իր ամբողջութեան մէջ Զարեանի գրականութիւնը աւելի քան արդիւնքն է հենց այդ երեւոյթի. այն այլ բան չէ, քան հայ ժողովրդի ապրած ցաւի ու արեան գեղարուեստական պատմութիւնը, հայութեան «այրուող վլըր»ի բացայալումը, ջանք՝ հայ մարդու ապրած տանջանքները եւ թափած արիւնը ծառայեցնելու չինացնող կեանքին եւ ոգեղէն արժէքների ու ազգակների վերածելու՝ ոգեկոչելու համար հայ մարդու ստեղծագործ կարողութիւնները, ցոյց տալու, որ կեանքի եւ մահուան տեւական պայքարի, լոյսի ու առաջընթացի անընդհան որոնման մէջ է նաեւ պարուրուած հայ ժողովրդի մեծութիւնն ու ոգու չութիւնը։

Զարեան ունէր այն համոզումը, որ արուեստի մէջ «կարելի չէ նրգել ոճիրը, որ երգել կարելի է միայն այն, ինչ վսիմ է, բարյական, լուսաւոր»²¹, քանի որ ոճիրը ապականում է կեանքն ու գեղեցկութիւնը։ Լալկան իսօսքը նաեւ նսեմացնում է ազգին Մինչդեռ անհրաժեշտ է արտացոլել ժողովրդի ոգեղէն աշխարհը, որ վսեմացնող յատկանից ունի։ Սակայն սա չի նշանակում, թէ Զարեանը իր հայեացքը լընջել էր այլ ուղղութեամբ։ Եղեռնը ոչ միայն ֆիզիկական ու նիթեական անդառնալի կորուստներ էր պատճառել, այլեւ խեղել էր միլիոնաւորների հոգեվիճակը, նրանց մատնել, Զարեանի իսօսքերով ասած, «ստեղծագործական ննուելութեան»։ Հայ միտքը «Վերջացած մոնի նման» հառաջանք էր քաշում։ Ուրեմն հարկ էր ոչ միայն իսօսել զոների մասին, այլեւ՝ թէ ինչ ապրեցին փրկուածները։ Եղեռնը այն երեւոյթն է, որ Զարեանին մղել է հայ մարդուն ու նրա ոգեղէն կերտուածքը տեսնելու ահաւոր այդ շարժիք գիրմակայման մէջ։ Այս յենքի վրայ էլ բարձրանում է Զարեանի գրական ընդգրկումների միւս առանձնայատկութիւնը՝ աշխարհի անդաշն վիճակի արտացոլումը, համաշխարհային կեանքի փլուզումների պատմութիւնը, մարդ-արարածին պատած քառային վիճակի պատկերումը։

Հայ ժողովուրդը եւ մասնաւորապէս նրա արեւմտահայ հատուածը, իդարի առաջին երկու տասնամեակների ընթացքում ազգային գոյամարտի սեղանին զրեց գարերի ընթացքում երազուած ազատարազմական իր նուրբումներն ու միտքը, ապրեց իր պատմութեան ամենաոգեւորիչ եւ միեւնոյն ժամանակ ամենաողբերգական տարիները ու այդ ամէնի ճանապարհին

կորցրեց Հայքենի հողն ու Հայրական տունը, տուեց կեանք ու արիւն եւ ցրոնք դարձաւ աշխարհի չորս ծագերում։ Զարեանի գրականութիւնն էլ գալիս էր ասելու, որ այս պատմական շրջանի գլխաւորագոյն խնդիրը Հայաստան երկրի ու ժողովրդի գոյատեւումն է։ Հենց յանուն այդ խնդրի էլ ապրում ու գործում են նրա կերտած հերոսներն ու անձինք։

«Համայն հայկական բշտառքինը» անրաֆանի է եղել Զարեանի հոգուց ու մտքից։ Եւ նա գրել է՝ միշտ զգալով հոգեկան ու մտային մեծ պատասխանատուութիւն հայ կեանքի առջեւ։ Գրել է ամէնօրեայ դառն ու սպանիչ դէպքերի թելադրանքով, ինչպէս վկայում է «Կողին Եւ Մի Մարդ» գործում մեծագոյն տանջանքով, միշտ ճգտելով երազածը իրականութեան վերածել։ Տանջանք, որ գալիս էր ազգային ցաւերից, աշխարհի կործանաբեր ընթացքից, իր ապրած օրերի վկումից, այն մտայնութիւնից, որ «կնանքը լաւ կազմակերպուած չէ», նաեւ ստեղծագործական այն որոնումներից, որոնց նպատակն էր արուեստի ճանապարհով յայտնաբերել այն, ինչը չական էր ու յաւերժական։ Կորսուած կեանքի եւ կորսուած մարդու վիճակը բեկուել է նրա ստեղծագործութիւններում, տարարնոյթ մեկնութիւններ ու ճիւզաւորումներ ստացել, դարձել խնդիր ու ասելիք, գաղափար ու թեմա։ Աղանայի կոտորածների լուրը Զարեանին ուղղակի ցնցել է։ Այդ շրջանի իր ապրումների ու աշխարհի վիճակի մասին նա գրել է «Մի, 909-ին աշխարհը մաս էր զալիս չորս ոսրի վրայ»²²։ Իսկ 1915ի զանգուածային ջարդերի, կոտորածների ու աքսորների վերաբերեալ գրել է Հակիրճ, սակայն շատ բնութագրական մի նախադասութիւն՝ «Գարուն, արիւն, արեւ եւ վիշտ»։

«Կրակի զյունվ հորի այլութիւնը այդուհանդերձ դարձել էր Զարեանի աշխարհմբուժման հիմքը, եւ պատահական չէ, որ նրա մէջ կուտակուել էր «յախտենական զայրոյթ»ը առ աշխարհը, որը նրան յաճախ է տանում հակասական ապրումների ու խարազանող խօսքի, կորսուեան եւ ընդգուման տրամադրութիւնների, իր խօսքով «արցունըների բոցեր»ի, որը նրան յանցեցնում է մէնակութեան ամենակու գաղափարին՝ «մէնակ ենք բորսուներու պէս»։ Եւ խսկապէս, ջարդերից փրկուածները զժրախտ երջանիկներ էին, հոգով ու մարմնով կիսակործան բեկորներ։ Բայց եւ անդին կար կեանքը, ժողովրդի ներքին կորովը, որը պիտի ապրեցնէր մազապուրծ խիեակներին։ Զարեանը այդ սերնդի մասին է գրել՝ «Տարարախտ սերունդ է մեր սերունդը, նման ենք այն հաւատացեալներին, որոնք ուզում են քանդուած քաղաքի մէջ եկեղեցի շինել»²³։

Հայ ոգու վերակերտածան, հայ մարդու ազգային անբեկանելի իրաւունքների, նրա մարդասիրական գաղափարների, անկախութեան, ինքնուրոյնութեան ու ազատաբաղմութեան, հենց այդ «նկեղեցաշինութեան»ն են նուիրուած Զարեանի Տարորագոմի՛ Հարսոց պոկմը, Անցորդը Եւ իր ծամփան յուշագորութիւնը, Բանկոուպը Եւ Մամութի Ասկորները, Նաւը Հերան Վրայ վէպերը եւ տասնեակ ու տասնեակ այլ գործեր, որոնցում գրովի գեղագիտական մտասեւեուման կիզակէտը միտուած է ամէն ինչում հայկա-

կանի գերակայութեան։ Այլ խօսքով՝ Զարեանի համոզումը եղաւ ու մնաց այն գիտակցումը, որ ամէն մի հայ եւ ամրող ժողովուրդը պէտք է գիտակցի իր պատմական գերը եւ պատասխանատուութիւնը «ցեղի տեսական արժեքները ամէն բանից աւելի գերադասելու մէջ»²⁴ (ընդգծումն իմն է - Ա.Ա.):

Անհատի կորստեան կամ կործանման ընթացքի խնդիրը նոյնպէս Զարեանի մշտական սեւեռման առարկան է եղել Ռւժեղ եւ ազատ անհատը, քաղաքական ու մշակութային ազատութիւն ունեցող անհատը գեղագիտական այն իդէալն է, որը պայմանաւորում է մարդու եւ ազգի փրկութեան զարեանական հայեցակարգը։ Գրողը կեանքի բարդ երեսոյների չուրջ մշտական խորհրդածութիւնների մէջ է մտել, պեղել մարդկային սիրտն ու միստքը, հասարակական ու ազգային յարաբերութիւնների դրսեւորումներում դիտել ազատութեան, իրաւոնքի ու պարտականութեան այն շրջանակները, որոնք պայմանաւորում են կեանքի առաջընթացն ու ժողովուրդների իրաւունքները։ Ռւժեղ անհատը, յանդուզն, հաւատաւոր ու նուիրեալ մարդը, հոգեկան հարուստ մարդը նաև իր երկրի կերպարանափոխող իշխանն է, մինչդեռ թոյլ ու անկամ մարդը, իր հոգեւոր կեանքից հրաժարուած մարդը, որը «ջնջում է իրեն վիճակուած քառակուսի մնար քրուածինը», իրեն միայն ծառայ է զգում։ Նրա հայրենասիրութիւնը իր ծննդավայրի հայրենասիրութիւնն է եւ ոչ թէ հոգեկան վերացումի բարձրագոյն գաղափար, որը պիտի հակազդի ընտանեկան, համայնքային ու կուսակցական չնչին մտահոգութիւններին։ Դարեր շարունակ հայ մարդը ընդունել է հզօր Աստծոյ գաղափարը, բայց ոչ՝ հզօր մարդու գաղափարը։ Նրա իդէալը պէտք է լինէր վերասլաց ընթացքը եւ ուղղահայեաց խորքը, մինչդեռ եղել է հորիգոնական լայնքը, որը ժանդուացքել է «Փայ սրտի սուրբ»։ Հայ գրականութիւնն էլ յաճախ, ըստ սովորութեան, «Վերը է պեղել»։ Հայ միտքը լցրել վշտերով։ Այդ գրականութիւնը թիէ է խօսել ժողովրդի հերոսական նկարագրի ու նրա առափինութիւնների մասին։ Զարեանը այս հանգամանքը նմանեցնում է Բէթհովէնի խորութեան ու թշուառութեան մասին խօսելուն՝ մինչդեռ պէտք է խօսուի նրա երաժշտութեան մասին՝ ասել է թէ՝ «ապրեցնող կամքի մասին։ Հայ մարդը, իհարկէ, աններող է եղել ու չի հանդուրժել «ստումը երկրի», չի հրաժարուել իր երկրից, բայց եւ չի ընդունել նրան այնպէս, ինչպիսին նա եղել է։ Հայ գրողն էլ է տարել է իր հողերի ահաւոր աղքատութիւնը, բայց երբ արտայայտուել է, իր ամրող ուժով գոռացել է՝ «Երկիր դրախտավայր»։

Ի՞ դարը ապրում էր խոր դրամա, որից դուրս չէին մնացել ո՛չ անհատներ, ո՛չ էլ ժողովուրդներ։ Նաև սա է պատճառը, որ Զարեանի յօդուածների ու գրութիւնների տիրապետող տարրը մերժման գաղափարն է, մինչդեռ գեղարուեստական գործերի առաջմուշից՝ հաստատման ոգին է։

Իր ամրողութեան մէջ Զարեանի գրականութիւնը նաև մի ծանր պարսաւ է՝ ուղղուած աշխարհի չար ուժերի դէմ, մի աշխարհ, որը լի է պատերազմներով ու խարդաւանքներով։

Զարեանը յաճախ է իրեն ու ուրիշներին հարց տուել՝ ո՞վ է հայ տիպար մարդը, եւ ո՞ւր է այդ տիպար մարդու կերպաւորումը հայ գրականութեան մէջ, ո՞ւր են «այն զաղափարաբանութիւնները, որոնցով պէտք է կառուցուի ազգի հոգեկան շենքը»։ Այս եւ մի շարք այլ հարցերի մարմնաւորման յաջողուած օրինակ դարձաւ զրոյի ծաւը Հերած Վրայ վէպը, որտեղ հեղինակը վերակենդանացնում է ամէն բան, ինչ կապուած է ի. գարասկզբի Հայաստան աշխարհի «կծու, լելի, բունաւոր» վիճակի, նրա քար ու լիուան, Հոդ ու ջրի, ժողովրդի անցած ու անցնելիք բարդ ուղիների, նրա ընթացիկ օրերի ու վայ երազանքների հետ։ Վէպ, որ հաստատումն է դառնում հայ մարդու կամքի ու պայքարի գնուակամութեան, բարձրագոյն եւ ազատ կամքով ապրելու նրա իրաւունքին։

Քաղաքական ու տնտեսական հարարուխների վրայ գտնուող Հայաստան աշխարհում ապրելը չարքաշ ճակատագրի է, տեւական կոր ոչ միայն թշնամիների, այլև ամայի հողերի ու կարծր քարերի դէմ։ «... մինչդեռ ուրիշ երկրները կերակրում են իրենց վարյա ապրոյ ժողովորդներին, էստեղ հայ ժողովորդը պէտք է կերակրի իր երկրին...»²⁵։ Ամէն անգամ հայ մարդը իր խօճիթից դուրս է եկել պայքարի համար. պայքար՝ ընութեան, իրար յաջորդող թշնամիների, հողերի կարծրութիւնների, ճակատագրի հարուածների դէմ։ «Նար դարի հետեւից զայս անցնում է, եւ քշնամիները միշտ նոր են ... Թամերլան, Ջինզիկ Խան, արաբներ, քարաբներ, տաճիկներ, սեղուկներ, աֆղաններ, պարսիկներ... զայս աւերտում են, այրում, քանդում, անցնում, իսկ ինքը՝ հայ ժողովորդը՝ հողի հետ հող, ժայոի հետ ժայոյ, նստած սպասում է»²⁶։ Այսպէս նա միշտ մենակ է իր ժայռերի հետ, ու նրա հաւատարիմ դաշնակիցները ցուրտն ու սովն են, համաճարակներն ու ոռնացող քամիները։ Հայաստանը մի վայր է, ուր «ճարդկային նարմին եւ տառապանք է հոտում»։ Զարեանը իր վէպում մատնանշում է նաև այն գերհօր լաւաները, որոնք փոթորկում են հայ կեանքի ընդերքում։ Ի հակադրումն համատարած թշուառութիւնների՝ հայ մարդը շարունակում է հաւատարիմ մնալ իր բաղձանքներին, բանակը կռւում է, ժողովուրդը՝ ցաւը երգի վերածում։ Հայ իրականութիւնը պէտք ունի թէ՛ զէնքով կռուող հերոսների եւ թէ՛ մանաւանդ մտաւոր ազնուական մարդկանց, եւ նա ծնել է գործունեայ մարդկանց, տուել ամենի կռուողներ, նաև՝ գաղափարի նուիրեալ մարդիկ։ Ենաւը Հերած Վրայ վէպի շատ հերոսներ հենց այդպիսի կերպաւորումներ են ստացել Զարեանի գրչի տակ՝ Արա Հերեանը, Բարկէն Միրանեանը, կապիտան թումաննեանը եւ այլք, ովքեր գերմարդիկ չեն, այլ մտածող ու գործնական խկական հերոսներ։ Նրանք անում են կարելի ամէն բան երկրին օգտակար լինելու համար. նրանք գիտեն գնալ նպատակի ետեւից, պատրաստ են զոհողութեան, նման են մեր պատմութեան ազնիւ հոգիներին՝ ազդային գործիչներ, մտաւորականներ, կրօնաւորներ, ովքեր, «Լորջ, տխոր դէմքերով, խնամուած փողկապներով, ակնոցների ետեւից երազուն աշքերով նայող, ոլոր մօրութերով, սեղմուած շրբունքներով մարդիկ են, որոնց դաժան եւ հաւատաւոր կեանքները զայի նման

վառութել էին ազգային պատմութեան խաւար լարիրինքոսներում»²⁷ (Ընդգծումն իմ է - Ա.Ա.):

Նրանք, չենց նրանք են Զարեանի առաջադրած «ո՛վ է հայ տիպար մարդը» հարցին պատասխանողները Աէրը եւ Մահը, աւերումը եւ արարումը: Ի՞նչ կը լինէր հայ ժողովուրդը, եթէ նրա պատմութեան ճակատագրական պահերին խաւարի միջից շրոցկլուային այդ հոգիները: Ողջ վէպի ընթացքում էլ գրովի համար մի չափանիշ է մուռում գործող անձանց մարդկային յատկանիշները բնութագրել նրանց ազգային գործունէկութեամբ, նրանց հոգեկան բարձրութեամբ ու ինքնազորողութեան պատրաստակամութեամբ, որոնք էլ ազգային յաղթանակի գրաւականներն են: Այսպիսով վէպի վլխաւոր ասելիքը յանգում է մի գլխաւոր մտքի՝ ազգային փրկութեան այլ ճանապարհ չկայ, քան ինքնուրոյն պետականութեան ստեղծումը, որը մինելու է գժուարընթաց մի ուղի՝ լի փոխնիփոխ զոհողութիւններով ու յաղթանակներով:

Զարեանի մէջ, որպէս գիտակցուած հակադարձում իր եւ իր գրականութեան նկատմամբ շրջապատի ցուցարերած միտումնաւոր վերաբերմունքի եւ առհասարակ որպէս ապրելու ձեւ, եղաւ ու մնաց անմնացրդ նուիրումը Հայաստան աշխարհին: Հայաստանի կերպարն էլ որպէս լուսաւոր մի տեսիլ յար անբաժան մնաց նրանից՝ ամենամեծ ու ընդգրկուն խորհրդանշիը նրա գրականութեան մէջ, այն ամէնը, ինչ որ կապուած էր բարձրին ու ազնիփին: Եւ պատահական չէ, որ նա որ համոզուած էր, թէ ամենակարեւոր բանը, որ կանգնած է Հայութեան առջեւ, հայ պետականութեան ստեղծումն է: Նրա մէջ շատ բան էր փոխում, բայց երբեք չէր փոխում նուիրումը իր երկրին: «Էղ հայոթիւն աստածը ի՞նչ սուսկալի բան է եղել», - գրել է նա՝ «Համոզուած», որ այն ամէն ինչ պարուրող սէր է, ոգու կանչ, մարդկային կոչում: «Նա ես եմ, ես նա եմ»: Մայր Հայրենիքի նկատմամբ ունեցած իր մեծ սէրը նա շատ պատկերաւոր է բանաձեւել Անծորքը Եւ իր Ճամփան գրքում: «Մենք փնտոել ենք հայրենիքը, ինչպէս թիթեննիկը փնտում է ճրազը, որի վրայ պիտի այրուի»²⁸:

Կարելի է ասել, որ Զարեանի համար ողջ կեանքի ընթացքում հնչել են Բանկոոպը Եւ Մամութի Խօսքըները վէպի հերոսներից մէկի՝ Գիւտ վարդապետի խօսքերը: «Հայոց աշխարհ, Հայոց աշխարհ: ... Ես այլով եմ թեզ հետ և թեզ համար, շնչել եմ քո շնչով, տառապել եմ քո տառապանքներով, որախացել եմ քո որախութիւններով: Այստեղ չ՝ այն Աստուածը, որին պաշտել եմ թեզ պաշտելու համար... Դու խա և համբարձում, վիշտ և թերկրանք. միջոց եւ նպատակ: Հայոց աշխարհ, Հայոց աշխարհ»²⁹:

Ով չի սիրում իր երկրը, ապրում է այլ վայրերում: Միւսները միշտ վերադառնում են: Կոստան Զարեանի ամենամեծ բաղդանքն է եղել վերադառնալ այն վայրերը, որտեղ ծնուել է «իր կեանքի առաջին տեսիլը: Վերադառնալ արմատներին»³⁰: Նա, որ ամէն ինչ տուել էր մարդկանց ու աշխարհին, նա, որ իրենով արդարացրել էր շատերի գոյութեան իրա-

ւունքը, մեծ մշակոյթի մէջ ձայն ունենալու կարելիութիւնը, իր կեանքի վերջին շրջանը եւս ստիպուած էր ամփոփել նոյնքան լքուած ու մոռացուած վիճակում, ինչպէս եղել էր նախկինում: Նա նման եղաւ այն արգունաւորդին, որը երկար թափառումներից յետոյ կանգ էր առել հայրենի տան շեմին, բայց այնտեղ գտել էր միայն իր տան պարապը Ու երբ ուզեցել էր նաւարկել, առջեւը միայն անապատ էր տեսել: Բայց նա արեց ամէն բան՝ իրենով զարդարելու համար հայրենի հողը:

Կոստան Զարեան մարդու, մտաւորականի, գրողի ու ազգային գործչի կեանքի հակիրճ բնութագիր կարող է ծառայել նրա Արծւմուտք գործի բնարանը.

«Դուք քննո՞ւ եք, քարեկամ,

Իսկ ես կանգնել եմ ահա մենակ»:

Եւ արդեօք երից իրաւացի չէր Զարեանը, երբ գրում էր. «Երախտապարտ եմ, օ՛, իմ երկիր, քո հասցրած ցափի եւ վերքերի համար»³¹:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Կոստան Զարեան, «Հռոմէական Յուշատերը. 1947», Հայրենիք, Բոստոն, Նոյեմբեր 1948, թիւ 11, էջ 11:

² Միաժամ, լոյս էր տեսնում Ժնևեւում եւ զաղտնի ուղարկւում Ռուսաստան: Տարփուում էր յեղափոխական գաղափարներ:

³ Զարեան, «Հռոմէական Յուշատերը», 1948, Հար. 11, էջ 12:

⁴ Գրական-մշակութային միութիւն, որը հիմնուել էր 1913ին եւ որի հիմնադիրներից էին Կոմիտասը, Վարուժանը, Օշականը, Շոսականը, եւք.:

⁵ Լոյս է տեսել ընդամէնը 7 համար, գլխաւոր առաջադրանքը հայ ոգու բացայաբումն էր, ինչը հայ արուեստագիտի նախակը պէտք է լինէր:

⁶ Հայ Արուեստի Տուն, որի կազմակերպիչն ու ոգեշնչողը Կ.Պոլիս ժամանած Յովհաննէս թումանեանն էր: Նոյն տարում Զարեանը Պոլում հրատարակել է Թարգրագանքը Հանդէսար, Օրենքը Պահպանաստեղծութիւնների ժողովածուն:

⁷ Կ. Զարեան, «Անցորդը Եւ իր ճամբան (Բանաստեղծի Յուշերից)», Հայրենիք, Յունուար 1928, թիւ 3, էջ 51:

⁸ Պրոլետարական գրողներ՝ ունեցրկեալների գրողները բոլշեվիկեան իշխանութեան գաղափարափողներն էին եւ գտնում էին, որ գրականութեան նիւթը բանուորական աշխարհց պէտք է լինի:

⁹ Մնջք գրական հանդէսը լոյս է տեսել 1930-31ին, Փարիզում: Այն համախմբում էր ժամանակի երիտասարդ ուժերին՝ անկախ կուսակցական պատկանելիութիւնից:

¹⁰ Տառաջը Փարիզում լոյս տեսնող թերթ էր՝ ՀՅԴ օրգան, խմբագիրը Շաւարշ Միսաքեանն էր, որ միջնեւ Եղեռնը խմբագրում էր Կ.Պոլիս Ճակատամարտ թերթը:

¹¹ Կոստան Զարեան, Նաւաստումար, Երեւան, «Սարդիս Խաչենց», 1999, էջ 578:

¹² Զարեան, «Անցորդը Եւ իր», Հայրենիք, Հոկտեմբեր 1926, թիւ 12, էջ 14:

¹³ Նոյն, էջ 14:

¹⁴ Տե՛ս՝ Արժ Պարբերական, Քէյլութ, 1958, Սեպտեմբերի 12:

¹⁵ Կ. Զարեան, «Հռոմէական Յուշատերը», Հայրենիք, Նոյեմբեր 1948, թիւ 11, էջ 12:

¹⁶ Անգլիացի բանաստեղծ Լորենս Դարրէլի հետ Զարեանը մտերմացել էր Կորֆու կղզում 1936ին:

¹⁷ Զարեանի արդ պէտմները լոյս են տեսել 1978ին՝ Երուսաղէմում: Գիրք Դիւցագներգութեանց վերնագրուով:

- ¹⁸ Զարեան, «Երկիրներ Եւ Աստուածներ. Սպանիա», Հայրենիք, Մարտ 1936, թիւ 5, էջ 58.
- ¹⁹ Ինքը՝ Զարեանը եւս հաստատել է այս իրողութիւնը. «Հայ գրականութան մեջ ոչ ոքի ոշնչով պարտական չեմ: Եմ գրականութիւնը զարգացած է ինքը իրունք» (Զարեան, Նաևառածներ, էջ 587).
- ²⁰ Շ. Ա. Պ., «Օրերի Պատկը. - Կոստան Զարեանին», Թարգրապահներ, Կ. Պոլիս, Ասդրիլ-Մայիս 1922, Հար. Դ., էջ 133.
- ²¹ Զարեան, Նաևառածներ, էջ 580.
- ²² Զարեան, «Անցորդը Եւ Իր», Հայրենիք, 1928, Հար. 12, էջ 18.
- ²³ Կոստան Զարեան, «Արեւմուտք», Թարգրապահներ, Կ. Պոլիս, 1922, Հար. Բ., էջ 45.
- ²⁴ Կ. Զարեան, «Երկիրներ Եւ», Հայրենիք, Յունուար 1936, թիւ 3, էջ 42.
- ²⁵ Կոստան Զարեան, Նաւշ Լեռան Վրայ, Պոսթըն, Հայրենիք, 1943, էջ 36.
- ²⁶ Նոյն, էջ 418.
- ²⁷ Նոյն, էջ 244.
- ²⁸ Կ. Զարեան, «Անցորդը Եւ Իր Ճամբան (Բանաստեղծի Յուշատեսրից)», Հայրենիք, Մարտ 1927, Հար. 5, էջ 22.
- ²⁹ Կոստան Զարեան, Թաենողուզը Եւ Մամութի Ռոկորները, Անժիլիաս, Տագ. Մեծի Տանն Կիլմելիոյ Կաթողիկոսութեան, 1987, էջ 285.
- ³⁰ Կոստան Զարեան, «Հայրենադարձ», Հայրենիք, Յուլիս 1949, թիւ 7, էջ 8.
- ³¹ Զարեան, «Անցորդը Եւ Իր», Հայրենիք, 1928, Հար. 4, էջ 38.

GOSDAN ZARIAN: THE WORLD AND AN INDIVIDUAL
(Summary)

ARTSRUN AVAGIAN

The article highlights aspects of the uneasy life and unconventional writings of Gosdan Zarian, one of the great names of Armenian literature. Zarian, who wrote in Armenian, Russian, French, Italian and English, is one of the rare authors in Armenian culture who wrote in almost all literary genres. He wrote extensively on world-famous thinkers and cultural figures as well as about diverse fields of art, including theater, cinema, painting, music and sculpture.

His complicated and conflicting views almost always made him an unaccepted figure to his literary opponents as well as his friends. This is why he was considered at times an author who created unnecessary pandemonium and at times as a radiant and marvelous author.

Zarian's literary work expressed the life, spiritual struggle and devotion of both Armenia and Diaspora Armenians. In a broader sense his work reflected the quest for the free Armenian and free Armenia. Many of his literary pages are of irreplaceable artistic documentary value. They are very modern and sound very contemporary. Equally valuable are the issues and concerns raised in the *Mehian* (1914) and *Partsravank* (1922) as well as *La Tour de Babel* (1925) and the *Armenian Quarterly* (1946), magazines all founded and edited by him.

He described his life as a fire burning in a wind. He lived his life with the ideology that everything is born out of struggle. Zarian was one of the founders of Armenian critical prose. He looked for life when all around him was darkness. He looked for happiness when all around him was agony and anguish. The very core of Zarian's literature is the unveiling of the spiritual richness of the Armenian individual. He was very practical and exalted in his expressions, which were uttered during both painful and epic events of the stormy history of Armenia.

The characters of Zarian are singled out by their intense and defiant personalities, they are not reconciled and do not forgive life's negative aspects, yet at the same time they dream and believe. His characters are not merely concerned with national topics. Zarian often examines pan-human issues, discusses facts related to human beings and nations, and is concerned with liberty and justice.

Zarian's literature chimed with and confirmed the Armenian voice in world culture.